ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Հասարակագիտության ուսուցման փոխներգործուն մեթոդների կիրառության ձևերը 8-9-րդ դասարանների դասագործընթացում
ԱՌԱՐԿԱ	Հասարակագիտություն
ՀԵՂԻՆԱԿ	Մաշուրյան Անուշիկ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Ակների միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Նոննա Ալավերդյան

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ……. 3

Հասարակագիտության ուսուցման փոխներգործուն մեթոդների կիրառման ձևերը 8-9-րդ դասարաններում …… 5

Փոխներգործուն մեթոդների կիրառմամբ օրինակելի դասի նմուշ-օրինակ……. 12

Եզրակացություն ……...…… 14

Օգտագործած գրականության ցանկ …… 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականության հիմնավորում: Այսօրվա կրթական պահանջն է՝ ուսուցումը դարձնել համագործակցային և աշակերտակենտրոն: Աշակերտակենտրոն կրթություն իրականացնելու համար պետք է զարգացնել սովորողի քննադատական, ստեղծագործական մտածողությունը, ձևավորել կյանքի նկատմամբ ակտիվ վերաբերմունք ունեցող քաղաքացի: Եվ այս խնդրի առջև կանգնած ուսուցիչը պետք է կարողանա համահունչ քայլել կրթական համակարգում տեղի ունեցող գործընթացների հետ և իր գործողությունները պլանավորելիս հաշվի առնել ոչ միայն մատուցվող գիտելիքները, այլև այն, թե ինչպես կարելի է այդ գիտելիքները հասանելի դարձնել աշակերտներին: «Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը նպաստում է սովորողի մոտ քաղաքական ինքնուրույն մտածելակերպի ձևավորմանը: Հասարակագիտության դասընթացում պետք է ձևավորվի գիտելիքների այնպիսի համակարգ, որը կնպաստի քաղաքացիական հասարակության ակտիվ անդամի ձևավորմանը:

Պետք է այնպես կազմակերպել դասը, որ յուրաքանչյուր երեխա հնարավորություն ունենա զարգանալ և բացահայտվել որպես ստեղծագործ, ինքնուրույն և լիարժեք անհատ: Այս ամենը պահանջում է ժամանակակից մոտեցում ուսումնական գործունեության կազմակերպմանը, աշխատանքի նոր ձևերի և մեթոդների որոնմանը:

Այս աշխատանքի ընթացքում կանդրադառնանք ուսուցման փոխներգործուն մեթոդներին, որոնք կարևոր նշանակություն ունեն «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման գործընթացում, կներկայացնենք դրանց կիրառման առանձնահատկությունները 8-9-րդ դասարաններում:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ առայսօր «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման գործընթացում փոխներգործուն մեթոդների կիրառման վերաբերյալ մեթոդական ամբողջական աշխատանք չի կատարվել, համակարգված վերլուծության չեն ենթարկվել հասարակագիտության դասավանդման ընթացքում փոխներգործուն մեթոդների օգտագործման առանձնահատկությունները 8-9-րդ դասարաններում:

Աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել և վերլուծել ուսուցման փոխներգործուն մեթոդների առանձնահատկությունները 8-9-րդ դասարաններում և բացահայտել դրանց կիրառման արդյունավետությունը:

Նշված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ **խնդիրները՝**

- բացահայտել փոխներգործուն մեթոդների դերը, նշանակությունը,
- ուսումնասիրել ու ներկայացնել 8-9-րդ դասարաններում «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման գործընթացնում փոխներգործուն մեթոդների կիրառման առանձնահատկությունները,
- ներկայացնել առավել արդյունավետ փոխներգործուն մեթոդներ,
- մշակել փոխներգործուն մեթոդների կիրառմամբ օրինակելի դասի նմուշ-օրինակ:

Հետազոտության **օբյեկտը** 8-9-րդ դասարաններում հասարակագիտության դասավանդման գործընթացն է, իսկ **առարկան՝** հասարակագիտության դասավանդումը փոխներգործուն մեթոդների առանձնահատկությունների բացահատումը:

Հետազոտության մեթոդը: Առաջադրված խնդիրների լուծման համար օգտագործվել են նկարագրական, համեմատական, վերլուծության ու փորձի մեթոդները:

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՁԵՎԵՐԸ 8-9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Փոխներգործուն մեթոդների կիրառման կարևորությունը: Ուսուցման փոխներգործուն մեթոդները մեծապես նպաստում են աշակերտների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների, մշակույթի ձևավորմանը, ուսուցման գործընթացը հետաքրքիր և աշխույժ դարձնելու պայմանների ստեղծմանը: Աշակերտներն այդ դեպքում պասիվ ընկալողից վերաճում են հայտնագործողի և գիտելիքների ստացման գործընթացի ակտիվ մասնակցի: Փոխներգործուն մեթոդները ավանդական մեթոդների հետ միասին ուսուցումը դարձնում են ավելի ճկուն, ապահովում ուսուցման արդյունավետությունը: Փոխներգործուն կիրառումը նախատեսում է ոչ թե ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում, այլև ուսուցման ակտիվ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում: Այն ուղղված է առաջնային գիտելիքի ձեռքբերմանը, մտածողության զարգացմանը, հմտությունների, հետաքրքրությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում, և այդ պատճառով անհնար է անցկացնել ուսուցման գործընթացը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ:

Փոխներգործուն տեխնոլոգիաները և մեթոդները բազմազան են. աշխատանք փոքր խմբերում՝ զույգերով, փոխատեղվող եռյակներով, կարուսելի, էվրիստիկական 10 զրույցի, դաս-սեմինարների (մտքերի փոխանակություն, բանավեճ), գործարար խաղերի, համագործակցային, մոդելավորման տեխնոլոգիաների կամ նախագծերի մեթոդ և այլն[1]:

Հաշվի առնելով, որ հասարակագիտություն առարկայի դասավանդումը նպաստում է սովորողի մոտ քաղաքական ինքնուրույն մտածելակերպի ձևավորմանը, և ոչ միայն, շատ կարևոր է, որ հասարակագիտության դասաժամերը նույնպես հագեցած լինեն նմանատիպ հետաքրքիր, բովանդակալից և արդյունավետ մեթոդներով: Նմանատիպ մեթոդների կիրառությունը կնպաստի աշակերտների ինքնուրույնության

[1]Գասպարյան Դ., Հայոց լեզու և գրականություն գիտամեթոդական հանդես, 2016, համար 1, էջ 19:

զարգացմանը, կառաջացնի ճանաչողական ակտիվություն և հետաքրքրրություն դեպի առարկան:

Փոխներգործուն մեթոդների կիրառման օրինակներ 8-9-րդ դասարաններում:

Ստորև ներկայացված են մի քանի փոխներգործուն մեթոդներ, որոնք կիրառվել են 8-րդ և 9-րդ դասարանների հասարակագիտության դասաժամերին:

Մտագրոհ: Մտագրոհը դասի մասնակցային սկիզբը ապահովող լավագույն մեթոդներից է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը: Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները[2]:

Այս մեթոդը խթանում է սովորողների ստեղծագործական մտածողությունը, կազմվում է առաջարկների գաղափարների ավելի լայն ցանկ, այս մեթոդի կիրառման ժամանակ անհնարին է, որևէ մտքի անտեսումը, միտքը միտք է ծնում: Պարզ մեթոդ է, հեշտ է հասկանալ, կիրառել և հեշտությամբ գնահատել:

Այս մեթոդը արդյունավետ է գործածել ցանկացած դասի խթանման փուլում, ինչպես նաև

- Համագործակցային թիմ ձևավորելու
- Երևակայությունը զարգացնելու
- Համագործակցությունը զարգացնելու
- Համարձակություն, ինքնավստահություն ներշնչելու
- Ստեղծահործական մտածողությունը խթանելու
- Կոնկրե խնդիրներ լուծելու
- Որոշումներ կայացնելու համար:

8-րդ դասարանում այս մեթոդի կիրառությամբ սկսել ենք «Մարդու պահանջմունքները» դասը (էջ 13): Դասը սկսել եմ հետևյալ հարցերով՝

- Ի՞նչ է պահանջմունքը:
- Հնարավոր է արդյո՞ք չունենալ պահանջմունք:

[2]Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան, 2020, էջ 27:

Առաջին հարցի շուրջ աշակերտների կողմից հնչեցին տարբեր պատասխաններ: Արտահայտեցին մտքեր, թվարկեցին մարդու պահանջմունքները՝ տարբերելով նյութականը ոչ նյութականից: Արտահայտած մտքերից առանձնացրինք՝ կենսաբանական, հասարակական, հոգևոր պահանջմունքները:

Նրանցից ոմանք որպես գլխավոր պահանջմունք նշեցին «մեծ և գեղեցիկ տուն»: Այնուհետև խոսեցին հասարակության մեջ ապրելու, հարգանք վայելելու, փողի, գեղեցկության, խելքի, աշխատանքի և այլոց մասին: Իսկ երկրորդ հարցին, թե հնարավոր է արդյոք չունենալ որևէ պահանջմունք, մի քանի վարկյան մտածելուց հետո գրեթե միաբերան պատասխանեցին որ ոչ, քանի որ պահանջմունքի դերը կարևորեցին մարդու ստեղծագործելու, արարելու, հասարակության մեջ ապրելու հանգամանքի հետ:

Այս մեթոդի կիրառությունը հնարավորություն տվեց կենտրոնացնել աշակերտների ուշադրությունը, լսել դասընկերների կարծիքները: Կարողացանք քննարկել գրեթե բոլոր հնչած պատասխանները, և այդ կերպ աշակերտները կարողացան զարգացնել մտահորիզոնը:

Վենի դիագրամ: Վենի դիագրամը կազմվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերիների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում: Այս դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով:

Վենի դիագրամը կարող է ունենալ ինչպես պարզ կառուցվածք (երկու հասկացության համեմատության համար) այնպես էլ բարդ (երեք-չորս հասկացությունների համեմատության համար):





Սա անհատապես կամ խմբով (հաճախ ավելի արդյունավետ է զույգերով) կատարվող վարժություն է, որը տեղեկատվության մեծ և մանրամասն պաշար չի

պարունակում, չնայած կարևոր է նշել այն հանգամանքը, որ ընդհանրությունները և առանձնահատկությունները նշելիս աշակերտներից պահանջվում է ընդգրկուն ձևակերպումներ գրառել:

Այն կարևոր համակարգող դեր ունի և օգտագործվում է դասի ամփոփիչ փուլերում նյութի ընթերցման և ամփոփման նպատակով և կիրառելի է բոլոր առարկաների համար:

Այս մեթոդի կիրառությամբ ամփոփել ենք 8-րդ դասարանի դասագրքում տեղ գտած «Հանդուրժողականություն և պատասխանատվություն» դասը (էջ 90): Դասը ամփոփելու ժամանակ, երբ արդեն աշակերտները հստակ պատկերացում ունեն հանդուրժողականության և պատասխանատվության մասին, նրանց հեշտությամբ հաջողվեց լրացնել գրատախտակին պատկերված դիագրամը:

Կռահման մեթոդ: Կռահման մեթոդը կիրառվում է այն դեպքում, երբ սովորողներին հաղորդվող բուն նյութը հայտնի չէ, սակայն, օգտագործելով նրանց գիտելիքների պաշարը և տրամաբանական մտածողությունը, ուսուցիչը փորձում է ջանքերի շնորհիվ բացահայտել, պարզաբանել նյութը: Որպես հնար հուշման միջոցով թվարկվում են անհայտ առարկայի հատկանիշները[3]:

Այս մեթոդը կիրառել եմ 8-րդ դասարանում «Ազատություն: Ազատության դրսևորումները և սահմանափակումները» թեմայի ժամանակ (էջ 59): Դասը սկզբում աշակերտների համար ընթերցվել է ազատության մասին Արիստոտելի մտքերից, բայց չբարձրաձայնելով ազատություն բառը.

«Այն, ըստ Արիստոտելի, հատուկ է մարդու՝ որպես բանական և հասարակական էակի գործունեությանը: Այն հանդես է գալիս որպես կամայական գործողություն անելու ունակություն: Բայց գործողությունների կամայական լինելը միայն բավարար չէ դրանք այդպիսին համարելու համար: Անհրաժեշտ է նաև, որ գործողությունները լինեն գիտակցված և նպատակային: Ըստ Արիստոտելի, մարդը այդպիսին է այնքանով, որքանով նրա գործողությունները բխում են իր կամքից և գիտակցված են»:

Ընթերցումն ավարտելուց հետո աշակերտները փորձել են կռահել թե ինչի մասին է խոսքը: Այս մեթոդը նպաստում է ուշադրության կենտրոնացմանը և հետաքրքրություն առաջացնում դեպի նոր թեման:

---

[3]Գասպարյան Դ., Հայոց լեզու և գրականություն գիտամեթոդական հանդես, 2016, համար 1, էջ 21:

Պրիզմա: Պրիզման մտածողության ձևը պատկերավոր, շոշափելի դարձնելու ձև է: Պրիզմայի հիմնական նպատակը ներկայացվող գաղափարի, հասկացության վերաբերյալ ենթագիտակցական ոլորտում եղած զուգորդային (ասոցիատիվ) կապերի վերհանումն ու արձանագրումն է: Պրիզման կիրառվում է դասի խթանման փուլում՝ ապահովելով ինչպես սովորողների հետաքրքրությունն ու ակտվությունը, այնպես էլ նյութի ուսումնասիրման գործընթացի արդյունավետ սկիզբը[4]:

Պրիզմա մեթոդով սկսել ենք 8-րդ դասարանի «Հասարակության սոցիալական կազմը. Խմբեր, շերտեր, համայնքներ» թեման (էջ 22):



Տեսանյութի և տեսաֆիլմի ցուցադրում: «Հասարակագիտություն» առարկայի դասերը հաջողված են լինում, երբ դասերը ներկայացվում են համապատասխան տեսանյութի կամ տեսաֆիլմի ցուցադրությամբ: Օգտագործվում են մուլտֆիլմեր՝

[4]Գյուլբուդաղյան Ա., Հարությունյան Կ., Թովմասյան Տ., Հասարակագիտություն, Ուսուցչի ձեռնարկ, VIII-IX դասարաններ, Երևան, 2013, էջ 85:

նախապես մշակված առանձին հատվածներով՝ հնարավորություն տալով երեխաներին ակտիվ քննարկել և մասնակցել ամբողջ դասապրոցեսին: Դա խթանում է երեխայի հետաքրքրությունը, նրա անմիջական մասնակցությունը, օգնում է արագ և արդյունավետ յուրացնել նյութը, զարգացնում է ստեղծագործելու, ինքնուրույն մտածելու կարողությունը[5]:

9-րդ դասարանում տեսանյութի դիտումով ամփոփեցինք «Պետական բյուջե» դասը (էջ 96): Տեսանյութը վերաբերում է միկրոձեռնարկատիրության սուբյեկտներին: Ինչո՞ւ հենց այս թեմայով: Քանի որ, միկրոձեռնարակատիրության սուբյեկտները օժտված են մի շարք արտոնություններով և ազատված են հարկերի որոշ տեսակներից: Շատ կարևոր է, որ աշակերտները տեղյակ լինեն այդ արտոնություններից, որոնք տրվում են ֆիզիկական և իրավաբանական անձանց[6]:

Բանավեճ: Ուսումնական զրույց-բանավեճը գործածվող ամենատարբեր մեթոդների համակարգում առանձնանում է սովորողների մոտ ճկուն մտածելակերպի զարգացման, ակտիվ կենսադիրքորոշման, գիտելիքների համատեղ որոնման, հայտնաբերման ու սխալների շտկման, մտքերի փոխանակության գործնական հմտությունների մշակման լայն հնարավորություններով: Բանավեճը կարելի է գործածել ուսումնական գործընթացի բոլոր օղակներում՝ երբեմն որպես ինքնուրույն մեթոդ, երբեմն էլ՝ զուգակցված ուրիշ մեթոդների հետ, որպես օժանդակ կամ բաղկացուցիչ մաս՝ հարստացնելով դրանց բովանդակությունը և լուծելով որոշակի կոնկրետ խնդիրներ (հարցի վրա կենտրոնացնել լսարանի ուշադրությունը, խթանել սովորողների մտածողությունը, ընկալունակությունը, ճշգրտել առաջ եկած կամ գոյություն ունեցող տեսակետներն ու ձևակերպումները և այլն)[7]:

9-րդ դասարանում բանավեճի միջոցով ամփոփել ենք «Շուկայական տնտեսությունը որպես ազատ ձեռնարկատիրության հենասյուն» դասը (էջ 88): Դասարանը բաժանեցինք 2 խմբի: Բանավեճի թեման հետևյալն էր՝ «Տնտեսության որ ձևն է նախընտրելի»:

---

[5]Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան, 2020, էջ 62:

[6] Տե՛ս տեսանյութի հղումը՝https://www.youtube.com/watch?v=l0t3h6DCc4c (27.11.2019):

[7] Հովհաննիսյան Հ., Բանավեճի տեսություն և արվեստ. Փիլիսոփայական քննախոսություն, ԵՊՀ, Երևան, 2019, էջ 129:

Քննարկումը անցավ ակտիվ մթնոլորտում, քանի որ նախորդ դասից գիտեին, որ քաղաքացիական հասարակությունը ազատ անհատների միավորում է, ուստի ժողովրդավարական երկրում մարդու ազատությունն ունի նաև տնտեսական իմաստ: Բանավեճի միջոցով աշակերտներին հնարավորություն ընձեռնվեց արտահայտել իրենց մտքերը, աշխատել թիմերով և լսել հակադարձող կարծիքներ:

Փոխադարձ դասավանդման մեթոդ: Այս մեթոդը կիրառվում է, երբ սովորողները զույգ առ զույգ, փոխարդարձաբար միմյանց նկատմամբ ստանձնում են ուսուցչի դեր: Մեթոդն արդյունավետ է, երբ հաշվի են առնվում դասավանդվող նյութի առանձնահատկությունները, բարդությունը, ինչպես նաև սովորողների տարիքային, անհատական, սեռային առանձնահատկությունները[8]:

Այս մեթոդի կիրառությամբ սկսել ենք 9-րդ դասարանի «Քաղաքացիական հասարակություն և հասարակական կազմակերպություններ» դասը (էջ 78): Դասաժամի ընթացքում դասարանը բաժանվել է երկու մասի, և աշակերտներին տրվել է 10 րոպե ժամանակ ուսումնասիրելու և թղթի վրա համառոտագրելու տվյալ դասի «Քաղաքական կազմակերպություններ» և «Ոչ քաղաքական հասարակական կազմակերպություններ» մասերը: Այնուհետև խմբերը սկսել են միմյանց պատմել, թե ինչ են հասկացել իրենց հատվածների ուսումնասիրությունից: Այս մեթոդը շատ արդյունավետ է և աշակերտները ավելի հեշտությամբ կարող են սովորել դասը:

[8]Գասպարյան Դ., Հայոց լեզու և գրականություն գիտամեթոդական հանդես, 2016 համար 1, էջ21:

ՓՈԽՆԵՐԳՈՐԾՈՒՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԴԱՍԻ ՆՄՈՒՇ-ՕՐԻՆԱԿ

Դասարան – VIII

Թեմա- Մարդը և շրջակա աշխարհը

Դասի նպատակն ու խնդիրները

Սովորողը պետք է՝

- նկարագրի բնության, մարդու և հասարակության փոխկապակցվածությունը
- բացատրի դրանց փոխհարաբերությունները
- ներկայացնի մարդու գործունեության ազդեցությունը բնության վրա:
- առաջարկի բնության և հասարակության ներդաշնակության խախտումը կանխող քայլեր:

Մեթոդներ, հնարներ- մտագրոհ, բանավեճ, հարց ու պատասխան, զրույց, հարցաթերթ:

Դասի տիպը- Նոր նյութի հաղորդում

Ուսուցման միջոցներ- գրատախտակ, կավիճ, դասագիրք, կպչուն թղթեր:

Խթանման փուլ

Դասը սկսվում է հարցադրումով. ո՞րն է առհասարակ մարդու կոչումը, ի՞նչ հատկանիշներ պետք է ունենա մարդը: (5 րոպե)

Իմաստի ընկալման փուլ

Դասարանը բաժանվում է խմբերի: Խմբերին հանձնարարվում է հետևյալ թեմաները

1. Մարդը բանական արարած է
2. Մարդը նույն «ցեղից» է, ինչ և մյուս կենդանի արարածները
3. Մարդը հասարակական էակ է:

Խմբերը քննարկում և ներկայացնում են իրենց կարծիքները: (20 րոպե)

Կշռադատման փուլ

Այս փուլը անցնում է բանավեճ քննարկումով. «Հնարավո՞ր է արդյոք կանխել կամ նվազեցնել մարդու գործունեության հետևանքով բնությանը հասցվող վնասները» թեմայով:

Բանավեճի անցկացման ընթացքում դիտել, կարգավորել, ուղղորդել աշակերտներին: Ամփոփել արդյունքները կրիրառելով բանավեճի անցկացման բոլոր կանոնները: (20 րոպե)

Անդրադարձ - Աշխատանքը ավարտելուց հետո կատարվում է դասի ամփոփում: Արդյունքները ամփոփվում են «Հարցաթերթ» հնարի օգնությամբ:

- Ի՞նչ նոր բան իմացա: Ինչի՞ համար են ինձ պետք այդ գիտելիքները: Ինչպե՞ս են դրանք կապվում արդեն ունեցած գիտելիքների հետ:
- Ի՞նչ սովորեցի կատարել: Ինչի՞ համար են ինձ պետք այդ կարողությունները:
- Հասե՞լ եմ իմ նպատակին: Եթե ոչ, ապա ինչու՞: Ի՞նչ պետք է անեմ, որպեսզի հասնեմ նպատակիս:
- Ի՞նչ դժվարությունների հանդիպեցի: Ինչու՞ են առաջացել այդ դժվարությունները:
- Ի՞նչ պետք է անել, որպեսզի այդ դժվարությունները չծագեն:

Դասի ավարտին կատարվում է գնահատում, և հանձնարարվում է տնային աշխատանք:

ԵԶՐԿԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով «Հասարակագիտության ուսումնասիրությունը փոխներգործուն մեթոդների կիրառությամբ 8-9-րդ դասարաններում» թեման՝ եկանք հետևյալ եզրակացություններին՝

- Հասարակագիտությունը հումանիտար գործառույթ ունեցող առարկա է, այն նպաստում է մարդու կողմից ինքն իրեն ձևավորելուն, իսկ դրա համար անհրաժեշտ է, որպեսզի դասավանդման ընթացքում տեսականն ու գործնականը զուգահեռվեն միմյանց:
- Հասարակագիտության դասընթացում ձևավորվում է գիտելիքների այնպիսի համակարգ, որը նպաստում է քաղաքացիական հասարակության ակտիվ անդամի ձևավորմանը: Այս առարկայի ուսուցման գործընթացում սովորողի քաղաքացիական գիտակցությունը բարձրացնելու համար շատ կարևոր է փոխներգործուն մեթոդների կիրառումը, ինչը նաև նպաստում է սովորողների գիտելիքների հարստացմանը ու ամրապնդմանը:
- Փոխներգործուն մեթոդներով պլանավորված դասերին ակտիվորեն մասնակցում են բոլոր աշակերտները, որովհետև այդ դասերը հետաքրքիր են, մատչելի, գրավիչ: Նպաստում են մեծ ծավալ ունեցող ուսումնական նյութի ավելի հեշտ յուրացմանը, ինչպես նաև կարողանում են ձեռք բերած գիտելիքները, կարողությունները և հմտությունները կիրառել գործնականում: Փոխներգործուն մեթոդների ընտրությունը ճկուն է, ուստի ուսուցիչը կարող է հեշտությամբ հարմարեցնել այն դպրոցականի հոգեբանամանկավարժական առանձնահատկություններին:
- Փոխներգործուն մեթոդների կիրառությամբ ուսուցումը ուղղված է սովորողների հետևյալ կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը՝ աշխատել թիմով, համագործակցել և կարողանալ ներկայացնել ստացած գիտելիքը և կատարած աշխատանքը, արտահայտել սեփական կարծիքը և կարողանալ պաշտպանել այն, փնտրել, գտնել և կիրառել ինքնուրույն, այլընտրանքային լուծումներ սոցիալական և հոգեբանական տարբեր իրավիճակներում, դրսևորել ստեղծագործական մտածողություն և այլն:

ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գասպարյան Դ., Հայոց լեզու և գրականություն գիտամեթոդական հանդես, Երևան, 2016, համար 1, (108):
2. Գյուլբուդաղյան Ա., Հարությունյան Կ., Թովմասյան Տ., Հասարակագիտություն, Ուսուցչի ձեռնարկ, VIII-IX դասարաններ, Երևան, Զանգակ հրատ., 2013:
3. Հովհաննիսյան Հ., Բանավեճի տեսություն և արվեստ. Փիլիսոփայական քննախոսություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2019, 285:
4. Ուսուցման արդյունավետ հնարներ, Երևան, Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, Հայաստան, 2020: